

ՆՐՈՍ ՄՈՐ ՄԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՊԱԽՈՐԻԶ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Երբև տարիներ առաջ, Լոս Անճելլոսի մէջ, անակեղաօրէն մահացած էր «Հերոս Մարին», որուն երախտապարտ հինգ զաւակներն ու զաղափարի ընկերները, 24 Յունիս 1994, Ռոբբար երեկոյեան ժամը 7ին, Սահակեան Լեւոն Միրտիչեան Դուլէնի շրջափակէն ներս յիշատակի ոգեկոյման հանդիսութիւն մը սարճած էին, ներկայութեամբ հարազատներուն, ընտանեկան բարեկամներուն եւ զաղափարակից ընկերներուն:



Հերոս Մարի Չիլիեկիրեանի. նուիրում գիրքին կողքի Ակարը

Իրրեւ հարազատ՝ ոգեկոյման հանդիսութեան բացումը կատարելու պարտականութիւնը վիճակուած էր համաճումն գոյլնի տնօրէն Պր. Պէպօ Սիմոնեանին, միաժամանակ վարելով նախարարացուած կոկիկ յայտագիրը: Օրուան գլխաւոր «վկայողն» էր Տիկ. Մաքրուի Թայատուրեան, Լաչաձանթ Մարիին՝ սատանեկան օրերէն միջեւ իր մահը: Զոյգ խօսողները զուսպ կերպով Մարին ներկայացուցին իրրեւ մայր ամէն բանէ առաջ, իրրեւ ընկերութեան մէջ զարծօն գեր վերցնող եւ այդ «գծով» Լաչաձանթ հայուհի: Զօ Պարուրեանի ընկերակցութեամբ երկու երգ մեներգեց Մարիին շնորհալի դուստրը՝ երջուէի Սիլվան, իսկ փակման եւ շնորհակալական խօսով հանդէս եկաւ՝ Աստուածարանութեան բարձրագոյն որդիներուն հասնելու ձգտող երիտասարդ տղան՝ Լրայը, որուն համար «Մնող մը յարգելու սիրել կը նշանակէ զԱստուած յարգելու սիրել: Մայր եւ հայր սրբութիւններ են, հետեւաբար, ներկայ աշխարհին մէջ ամենէն կարեւորը լա՛ւ զաւակ ըլլալն է»:

Արդարեւ, շա՛տ յուզիչ, տղաւորիչ եւ մա՛նաւանդ դաստիարակիչ էր այս հանդիսութիւնը, երբ նկատի ունենանք թէ մայր մը մեծարելու երեսը շատ աւելի գերակշիռ էր Լան՝ հերոսը... որուն կազմակերպիչներն էին նախ իր զաւակները, ապա՝ նոյրերն ու փեսաները. ի վերջոյ՝ զաղափարի ընկերները:

Մեր այն մայրերը, որոնք, ո՛չ թէ ՄԳԱՍՈՒՂԻՆԵՐՈՎ այլ՝ ՄԳԱՍԱՒՐՈՒԹԻՒՆ ընկելով զաւակ մեծցուցած են, մէյմէկ անգէն հետեւներ եղած են, արժանի՝ զաւակներուն գուրգուրանքին՝ ու գնահատանքին, որոնցմէ Լանի՝ հոգին նմանօրինակ ոգեկոյման արժանացած է. կամ կենդանութեան մեծարումը...:

Այսօրուան հանդիսութիւնը պատգամ մը ունէր, ուղղուած՝ զաւակներուն, թէ սէտք է յարգել ու մեծարել ծնողները, զանոնք սէտք է անտեսել: Միայն եւ անընդունելի է եկեղեցիին մէջ տրուած այն պատգամը, թէ «Հայրդ եւ մայրդ ձգէ ու կնոջդ հետեւն գնա»: Թէեւ, կի՛ն արարածը, իր ամուսնութենէն ետք ա՛յլ աւելի կը փարի իր ծնողիին, տղան են որ ամուսնութեան «Սուրբ պատգամին» հաւատարմօրէն կը հետեւին...:

(Նրբ Լրայը ինք բարձրացաւ եւ հայ մօր, հայ ծնողիին գովելը հիւսնց՝ ներկաներէն շատելուն աչները տամկեցան, լուսօրէն արտասուելիցին: Երբ վերադարձին... որովհետեւ...):

Այս՝ ճախիրով: «Հերոսութիւն Մարի Չիլիեկիրեանի» զաւակները նոյնանուն 80 էջեց գրքով մը յոյս ընծայած էին, որուն մէջ, կարգ մը գրողներուն կողմէ վեր առնուած էր Մարիին խիզախութիւնը՝ իր հօր՝ Հերոս Աստուոր Մաչեանի կերպարով:

Այսօրուան հանդիսութեան երկրորդ պատգամը (որ բացէն շրտեցաւ) այն էր որ ծնող մը հետեւէն-հետեւ չի սիրուիր այլ՝ մօտէն (ըսել չենք ուզելով՝ ծունկիդ առջեւէն):

Չեւակերպութեան համար սարճուած «հոգեհանգիստ»ները կ'անհանգստացնեն այն ծնողները որոնք, իրենց ողջութեան՝ անտեսուած են իրենց զաւակներուն կողմէ:

Հայ մայր ըլլալը ինքնին «հերոսութիւն» է: Մեր մայրերը կրկնակ «հերոս» կ'ըլլան երբ լծուին ազգային առակելութեան մը, շատ նոյնի՝ զենեով, շատեր՝ ազգային որեւէ հաստատութեան մը մէջ ընկերային ծառայութեան լծակից դառնալով: Մեր Մարին թէ՛ զենք ունեց, թէ՛ կանաչիական շարժում ղեկավարեց եւ թէ՛ զաւակներուն ապագան երաշխաւորելու համար Ովկիանոսը անցաւ, եւ ուր, ուրախ հաւանորթի մը ընթացքին սիրտը դաղորեցաւ բարախելով: Մարին միշտ ուրախ էր, խնդալ գիտէր, ուրախ մընդորտ ստեղծելու բնածին յատկութիւն մը ունէր: Երբ ինքզինք գրականութեան նուիրած ըլլար՝ առանց չափազանցութեան երգիծագիր մը կրնար ըլլալ: Սրէ տղայ ծնէր՝ շատ մը կեղծ-հերոսներուն հերոսութեան դասեր կու տար:

Այսպէ՛ս նաեւ Մարին, թէ՛ ազգականական յարաբերութեանց ընթացքին եւ թէ՛ ընկերային շրջանակէն ներս:

Բազմաթիւ ներկաները ի վերջոյ պատուեցան շատ նոյս հիւրասիրութեամբ:

Շնորհակալութիւն
ԿԱՐԱՊԵՏ ԼԱՆԷՍՆԱՆ